չև ցմահ, ուստի ի շարս բազմաթիւ տաճիկ մանկանց՝ չորս Հայ մանկտի ևս ի քաղաքէս Նշանակեալ Ներկայացան Նորին մեծութեան, զոր զրելով յարգոյ խմբագրութեանդ՝ խնդրեմ զհրատարակութիւնն ի խնդութիւն Հայասէր զգայուն սրտից,

Նալբ Նալբէեանց

է Դ-բէժ։

ՀԵՂԵՂ Ի ՍԱՎՐԻ.

Կարծես թէ յայսմամի Ատրպատական Հայաշունչ թշուառութեանց բազմաիեղկեան դոնեբրն բացուեց, վասն զի գեռ գրիչներս չդադրացրած՝ աղքատաց սովալուկ և աւաղելի կեանքն մեր ազգի լրութեանը յայտարարելուց՝ ահա նոր թշուառ վիճակ կբացուի Սավրի գեղջ բնակչաց. քանզի անցեալ մայիսի 15 ին ընդ մուտս արեգական գրեթէ արտաքոյ բնականին սաստիկ անձրևեց, որք միանալով գետահետեալ մտին զիւղն, ահարկու տեսարան կազմելով, և յանկարծ լցուելով բնակութիւններն՝ բարեկամ բարեկամի՝ և դրացի դրացւոյ կենաց փրկութեան օգնականութեանն անձեռնհաս կգտնուէր, ըստ որում հաղիւ իւր կենաց յոյսն երկրայութեամբ ունէր մինչև արտաքոյ գեղջ ելանելն, քանզի որմ և տանիք յանկարծակի փլատակէին այն ահարկու հեղեղի սաստկութենէն, ահարկու, վասն զի տեարք իւրեանց ընչից կորստեանն հանդիսատես լինելով՝ չվստահացան միջամտել և ազատել, ըստ որում իւրեանց կեանքն էլ տակաս պիտի տային ընչից փրկութեանը, եթէ յանդգնէին բընակարանն մտնելու. կարեկցելի՞ տեսարան. մանկունք ողբալով իւրեանց ծնողաց զիրկն կընկնեն. իսկ ծնողք խորին տրտմութեամբ լցուած՝ այդ սոսկալի հեղեղի գործողութեանց կնային, քանզի կայից և կարասեաց հետ էլ անասունների կորուստն կտեսնէին, թէ ընդ փլատակօք և թէ ի ջուրս. այս կարեկցական և կորստական հանդէսը մի քանի ժամէն զկնի իւր ահարկութիւնն վստահութեան փոխարկեց, ըստ որում ընդ ինքանելն ջուրց վստահացան բնակիչքն մտանել ի գիւղն՝ ուր 40 Հայք կգտնեն իւրեանց տունը հիմնայատակ կործանուած, ոմանք կիսով չափ փլատակեալ, իսկ բաղումք խախտեալք, ուր բնակութիւնն սաստիկ երկիւղի տակ էր. գալով նոյն գիւղի մէջն գտնուած պարսից, 350 տուն վերոյիշեալ երեք կերպ վտանգի տակ։

Այս անակնուեալի վտանգի համար տեղական Հայ ժողովուրդք հանրագրութեամբ կդիմեն տեղւոյս Գերապատիւ Առաջնորդի զթութեանն և օժանդակութեանն, խնդրելով միանգամայն, զրաւոր խնդրել ի Պարսից կառավարութենէ, ներկայ ամի արքունի հարկի պահանջն ներել, զոր խստիւ կգործադրեն հարկապահանջք այս դառն պատահարէն անմիջապէս զկնի. զոր և Գերապատիւ Առաջնորդն զրաւորապէս ներկայացրեց բարձրագոյն դրան՝ նոցա ի վերայ թշուառ ժողովրդոց կարեկցութիւն խնդրելով. զորմէ ծանուցանելով խմբագրութեան ազգօգուտ Արարատիդ, զորա բազմաշահ էջերուն միոյ մէջ հիւրընկալել կխնդրեմ։

Օհան Տէր Օհանէանց

է 1 յունիսի 1872 ամի։

է Դ-բէժ

ՄԱՐԱՂԱՑԻ.

Մինչդեռ համայն աշխարհ իւր մտաւոր բարոյական և նիւթական յառաջադիմութեան հանդէսն ուրախութեամբ սրտի և պարծանօք օրագրաց և ազգաշահ աւանթերթից ասպարիզումն վայելչապէս ի խնդակցութիւն համազգեացն հրատարակէ, տարաբախտ Դաւրէժ՝ որ գեռ նոր զրասիրական և զրաղիտական նուիրական ազգաշէն պարտքը զգաց բարեբաղդաբար, և ձեռնածիգ լինի իւր տղիտութեան մթաղդաց հորիզոնն պայծառազարդել գիտութեան լուսով, կցաւի տարապայման. քանզի համազգեաց ազգասէր ըղձից և յառաջադիմութեան փափագանացն համապատասխան չէ իւր տխուր և աչալուրջ ուշադրու-